ՊԱՅՔԱՐ ՄԻՆՉԵՎ ՀԱՂԹԱՆԱԿ

Արդեն երկու տարի է, ինչ անհնարին կերպով պրկված-լարված են մեր նյարդերը։ Երկու տարում մենք ապրեցինք սումգայիթյան նախճիրը, «Զվարթնոց» օդանավակայանի ողբերգությունը, «ինտերնացիոնալիստ» հարևաններից մազապուրծ փախածների գաղթը, պարետային շարաբաստիկ ու մեզ պարտադրված ժամը, մեծ երկրաշարժի ահռելի աղետը։ Ու այդ բոլորին որպես ուղեկից ու բաց վերք՝ արցախյան հարցը՝ մեր այսօրվա հարցերի հարցը։ Իսկ մեր անմիջական հարևան կոչվածներին քիչ թվաց այս ամենը և նրանք իրականացրին մի նոր ոճիր՝ շրջափակումը, որը կրկնում են նաև այս օրերին։ Մի ոճիր, որն աննախադեպ էր մեր երկրի կյանքում։ Եվ իզուր էին մեզ հավատացնել ջանում, թե երբեք էլ շրջափակում չէ։ Իզուր էին այդ բառից խուսափում կենտրոնական մամուլն ու հեռուստատեսությունը։ Ոչ, մեզ համար և այն օրերին, և մանավանդ այժմ Աստծո լույսի պես պարզ էր և պարզ է, որ այդ ամենն արվում է մեր ուժը թուլացնելու, մեզ տկարացնելու և ահաբեկելու համար, որպեսզի մենք չկարողանանք հանուն իր արդար իրավունքի պայքարող Արցախին օգնել, ցանկանում էին այդ կերպ «լուծել» արցախյան հարցը, մի հարց, որ դարձել էր վերակառուցման իրոք փորձաքարը։ Այն փորձաքարը, որի արդար լուծմամբ պիտի ժողովուրդը հավատար վերակառուցման մասին խոսքերին։ Իսկ Սումգայիթից սկսած՝ երերաց ժողովրդի հավատը վերակառուցման հանդեպ և կասկածը գնալով խորացավ։ Այո, խորացավ, քանի որ ժողովուրդը տեսավ, թե ինչ միջոցներով է կենտրոնական իշխանությունը ցանկանում ազատվել իրեն այդքան գլխացավանք պատճառող հարցից։ Ահա թե ինչու այս երկու տարվա ընթացքում կենտրոնական մամուլն ու հեռուստատեսությունը և ղեկավարներն ինչ որակում ասես չտվեցին հայոց համազգային շարժմանն ու արցախցիների վճռական դիմադրությանը։ Նրանք ցանկացան ամեն կերպ վարկաբեկել արցախյան հարցը, մեր ժողովրդին վերագրելով չլսված ու չտեսնված բաներ։ Իհարկե, սթափ մարդիկ թե Միությյան մեջ և թե արտասահմանում լավ էին հասկանում բանի էությունը և չէին հավատում այդ պրովոկացիոն հայտարարություններին ու լուրերին։ Բայց կային և հավատացողներ։

Այո, երկու տարի է, ինչ ձգձգվում է այս հարցը, դառնալով զանազան էքսպերիմենտների առարկա։ Բայց ոչինչ չէր ընկճում ոչ Արցախի և ոչ էլ Մայր Հայաստանի կամքը։ Եվ չընկճեց։ Սակայն պետք էր ընկճել, և փորձեցին դա անել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանում։

Դա արեցին նստաշրջանի վերջին օրը, ցանկանալով հանկարծակիի բերել Արցախի և Հայաստանի ժողովրդական դեպուտատներին, վստահ լինելով, որ ինչպես ճիշտ որակվել է արդեն՝ հլու-հնազանդ մեծամասնությունը կքվեարկի նման ամեն մի որոշում, և այդպես էլ եղավ։ Քվեարկեցին, և որոշումը մի ներքին ուրախությամբ հեռարձակվեց եթեր, և մեր ժողովուրդը, որ Մայր Հայրենիքում է ու Արցախում, ներքին սփյուռքում, թե արտասահմանում, իմացավ ու կիմանա այս մասին և կհասկանա, թե դեռ շատ շուտ է խոսել արդարության մասին։ Իսկ ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատները, որ դեռ երեկ այնպես կուրծք էին ծեծում վասն արդարության, այնպես վրդովվում էին ստալինյան բռնակալության տարիներին տուժած փոքրաքանակ ժողովուրդների նկատմամբ կատարված ոճրագործությունների համար, շատ հանգիստ քվեարկեցին մի որոշման օգտին, որը ամենացավոտն էր խորհրդային իշխանության հաստատման օրից մեր ժողովրդի հանդեպ կատարված անարդարությունների մեջ, որն անցած տարիների ընթացքում տեսել է թե Արցախի ու Նախիջևանի բռնակցումը Ադրբեջանին, թե 1930-ական թվականները, թե 1949 թվականը և բազում այլ անարդարություններ, ու դրանց գումարվում է ահա այս մեկը ևս։ Սակայն այսպիսի որոշումն անսպասելի չէր մեզ համար։ Ամերիկյան Սենատի բանաձևի շուրջն ստեղծված կեղծ ու անազնիվ աղմուկը, ԽՍՀՄ արտաքին գործոց մինիստրության հայտարարությունն ու հարայ-հրոցը մի բան էին միայն ապացուցում. Արցախի դեմ դավադրություն է նախապատրաստվում։ Այո, դավադրություն։ Եվ ժողովրդական այն դեպուտատները, որոնք խիղճը մի կողմ թողած քվեարկեցին այս որոշման օգտին, փաստորեն հաճոյացան ադրբեջանական ժողովրդական ճակատ կոչվածին։ Եվ երևի մի օր նրանցից ոմանք զղջան, հասկանալով, թե ինչի են մղել իրենց։

Պատմությունն ունի ոչ միայն իր դասերն ու հիշողությունը, այլև՝ դատաստանը։ Եվ ոչ ոք չի խուսափում դրանից։

Այս որոշումը նշանակում է վերադարձ մինչ 1988 թվականի փետրվար ամիսը, նշանակում է Արցախը նվիրաբերել Ադրբեջանին, ընծայել ժողովրդական ճակատ կոչված խառնամբոխին։ Նշանակում է ծաղրել մեր ազգային ու մարդկային զգացմունքները և ապացուցել, թե վերակառուցման մասին խոսքերը սին են։ Եվ հազար անգամ ճիշտ վարվեցին Արցախի և Մայր Հայաստանի դեպուտատները՝ վճռական հայտարարությամբ հեռանալով նստաշրջանի դահլիճից։ Եվ բնավ անզորության գիտակցությամբ չէր պայմանավորված սա։ Նրանք այս քայլերին դիմելով շատ լավ էին գիտակցում, թե ուր էլ լինի՝ իրենց թիկունքին է կանգնած ողջ հայ ժողովուրդը։

Նրանք այս քայլերով հասկացրին, թե այսուհետև թող ոչ մեկը չփորձի իր կամքը թելադրել հանուն իր ոտնակոխ իրավունքների պաշտպանության ոտքի ելած մի ողջ ժողովրդի, որ մենք այսօր առավել վճռականությամբ ենք պայքարելու մեր իրավունքների համար։

Մեր ժողովուրդը այս վերջին երկու տարում առավել մեծ արժանապատվությամբ ու հպարտությամբ է ապրում, երբեք ու երբեք չենթարկվելով, ոչ հուսալքության և ոչ էլ՝ խուճապի։

Գևորգ ԴԵՎՐԻԿՅԱՆ